կիրառում կայսերական քաղաքականության, որի համաձայն Փոքր Կովկասի գրեթե բոլոր լեռնանցքների մոտ հաստատվում էին ռուսական գաղութներ։ Այսպես էր Լոռուց՝ դեպի Շիրակ, Դիլիջանից՝ դեպի Փամբակ և Արարատյան դաշտ, Զեգամի հովտից՝ դեպի Սևանա ավազանը տանող լեռնանցքների մոտ։ Նույն ծրագրով Սիսիանի (Բիչանաղի) լեռնանցքի արևմտյան կողմում, Նախիջևանի գետի վերնագավառում, հիմնվեց Կարմարինովկա ռուսական գյուղը։ Բարիսովկայի ռուսների կուլտուրական ազդեցությունը շրջակա հայ և թրքական գյուղերի վրա չափազանց սահմանափակ էր, մանավանդ եթե համեմատելու լինենք Լոռում և Դիլիջանի երկու լեռնանցքների մոտ զետեղված ռուսական գյուղերի այն բազմակողմանի ազդեցության հետ, որը նրանք ունեցան հարևան հայ բնակչության տնտեսական ձևերի և կենցաղի վրա։

Տեղական երկու հին ազգությունների մեջ կատարվում էր կենցաղի ձևափոխություն թե ներսում և թե արտաքին փոխհարաբերությունների մեջ։ Ջմեռանոցների մի խոշոր մասը վեր էր ածվում մշտական գյուղերի և լեռնային ֆօշվօրնէրի արոտավայրերը դրվում էին որոշ սահմանների մեջ։ Սակայն այդ պրոցեսը ընթանում էր նախասովետական շրջանում չափազանց դանդաղ։ 1886 թ. Զանգեզուրի արքունի գյուղացիների տնտեսական կացությունն ուսումնասիրող Ս. Զելինսկին տալիս է իր ժամանակվա թրքական կենցաղի հետևյալ սովորական պատկերը[18]։

«Գարնան գալուն պես, շնչին ցանքեր կատարելուց հետո, թուրքը բարձում է իր էշին ունեցած-չունեցածը, ամբողջ գույքը, որը կազմված է լինում ալաշուխից (վրանից), մի քանի անկլեկ պղնձներից, պանրի ու յուղի կիսափտած պարկերից ու տիկերից և շարժվում է իր հոտերի հետ սարերը։ Գյուղեր կան, որտեղ բնակիչները ձգում են իրենց հյուղակները ապրիլին և վերադառնում են նոյեմբերի կամ դեկտեմբերի սկզբներին, երբ դուրսը ցուրտը դառնում է արդեն անտանելի։ Քօշվօr կյանքը այնքան սովորություն է դարձած, որ յայլաղ են բարձրանում նույնիսկ այնպիսիները, որոնք բառիս նշանակությամբ մի գլուխ անասուն էլ չեն ունենում։ Հաճախ պատահել եմ շորս-հինգ հոգուց բաղկացած ընտանիքների, որոնք իրենց վրա տնային իրերը բարձած, առանց ալաշուխի և հացի պաշարի, ձեռքին երկու երեք հավ բռնած կամ միակ աքաղաղը՝ սար էին գնում, կարծես դա լիներ գոյության անհրաժեշտ պայման։ Եթե հարցնում էի, թե՝

«Ո՞րտեղ պիտի ապրեք, քանի որ ալաշուխ չունեք»,

նրանք միամիտ-միամիտ պատասխանում էին՝

«Մի կերպ յոլա կերթանք»։

Այսօր էլ թե՛ Սիսիանում և թե՛ Կապանում և Սիսիանի (Բարգուշատի) լեռնաբազուկի հովիտների վերնամասերում քիչ չեն այնպիսի գյուղերը, որոնք մինչև վերջին տարիները ոչ այլ ինչ էին, եթե ոչ նույն հին ձմեռանոցները։ Այսպիսի տեսարան էին ներկայացնում Գեղին, Քիրսը, Քյուրուտը՝ Գեղվա գետի ձորում, Արիգետի (Այրիչայի) հովտում՝ Մուրխուզը, Փուսակը, Ալիշարը։ Այդտեղից գարնան բացվելուն պես դյուրին է բարձրանալ այդ լեռնաբազուկի բարձրադիր ճոխ արոտավայրերը, ուր գալիս են նաև Նախիջևանի հանրապետության կողմից թուրք սարվորները։ Այդ գյուղերը շարունակում էին ներկայացնել գերազանցորեն ձմեռանոցներ, որտեղ մինչև վերջին տարիները

---

[18] Նշված աշխ., էջ 15։